# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2003
## ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«ՀՀ պետական պարտքի 2003թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Ս. Խանվելյանը, Գ. Վարդապետյանը, Ք. Խաչատրյանը և Ս. Իսրայելյանը:

# ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2003 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը (տես գծ.1, աղ. 1).

- ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 41,046.28 մլն. դրամ, որից ՊԿՊ-ները՝ 21,400.0 մլն. դրամ, իսկ ՄԺՊ-ները՝ 19,646.28 մլն. դրամ:
- պետական պարտատոմսերի գծով դեֆիցիտի ֆինանսավորումը՝ 293.3 մլն. դրամ:
- միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 16.05%:
- պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 253 օր (ՊԿՊ-ներ՝147 օր և ՄԺՊ-ներ՝374 օր):

**Աղյուսակ 1**

***2003 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներ***

*(մլն.դրամ)*

| | առ 30.06.2002թ | առ 31.12.2002թ | առ 01.07.2003թ |
|---|---|---|---|
| **Ներքին պետական պարտքը** | 38,593.83 | 40,812.56 | 41,046.28 |
| որից՝ | | | |
| կարճաժամկետ պարտատոմսեր | 23,300.00 | 23,300.00 | 21,400.00 |
| միջին ժամկետ. պարտատոմսեր | 15,293.83 | 17,512.56 | 19,646.28 |
| | | | |
| **Ներքին պետ. պարտքի ժամկետայնությունը (օր)** | 232 | 263 | 253 |
| որից՝ | | | |
| կարճաժամկետ պարտատոմսերի համար | 163 | 169 | 147 |
| միջին ժամկետ. պարտատոմսերի համար | 373 | 410 | 374 |
| | | | |
| **Ներքին պետ. պարտքի եկամտաբերությունը (%)** | 16.8579 | 16.4304 | 16.0543 |
| որից՝ | | | |
| կարճաժամկետ պարտատոմսերի համար | 15.1950 | 14.7908 | 14.4911 |
| միջին ժամկետ. պարտատոմսերի համար | 19.3913 | 18.8359 | 17.7570 |

**Գծապատկեր 1**

***Ներքին պետական պարտքի կառուցվածքը 2003թ.-ի հունիսի 30-ի դրությամբ***



## *ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ*

2003 թվականի I կիսամյակի ընթացքում տեղի է ունեցել 25 թողարկում, որից 17-ը` ՊԿՊ-ների, 8-ը` ՄԺՊ-ների թողարկումներ են: Պետական պարտատոմսերի թողարկման ծավալի մեջ ՊԿՊ-երը կազմել են 10.1 մլրդ. դրամ (51%-ը), իսկ ՄԺՊ-երը` 9.6 մլրդ. դրամ (49%-ը): ՊԿՊ-ների մեկ թողարկման միջին ծավալը կազմել է 600.0 մլն. դրամ, ՄԺՊ-ինը` 1,200.0 մլն. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է առաջարկը 2.25 անգամ, տեղաբաշխվել է թողարկման ծավալի 95.4%-ը: I կիսամյակի ընթացքում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 373 օր, եկամտաբերությունը` 14.81% (տես աղ. 1):

Աղյուսակ 2

***2003 թվականի I կիսամյակի ընթացքում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների***

| | Նվազ. եկամտ. | Առավ. եկամտ. | Միջ. կշռվ. եկամտ. | Տեղ. միջ. կշռ. օր |
|---|---|---|---|---|
| Հունվար | 14.6000 | 15.0649 | 14.9061 | 325 |
| Փետրվար | 11.5300 | 13.3000 | 12.7655 | 312 |
| Մարտ | 12.3700 | 17.1042 | 15.0328 | 381 |
| Ապրիլ | 13.5000 | 18.3104 | 16.0245 | 334 |
| Մայիս | 13.2000 | 17.4830 | 15.3692 | 295 |
| Հունիս | 11.0251 | 16.1297 | 14.2751 | 525 |
| I կիսամյակ | 11.0251 | 18.3104 | 14.8117 | 373 |

Աղյուսակ 3

**Առաջնային տեղաբաշխման կառուցվածքը ըստ մասնակիցների**

| | 6 Գործակալներ % | 13 Դիլերներ % | ԳՊ % | Ընդամենը % |
|---|---|---|---|---|
| Հունվար | 73.79 | 22.61 | 3.60 | 100.00 |
| Փետրվար | 74.25 | 23.63 | 2.12 | 100.00 |
| Մարտ | 59.72 | 39.02 | 1.26 | 100.00 |
| Ապրիլ | 59.18 | 36.45 | 4.37 | 100.00 |
| Մայիս | 75.23 | 22.17 | 2.60 | 100.00 |
| Հունիս | 87.58 | 10.87 | 1.55 | 100.00 |
| I կիսամյակ | 71.36 | 26.24 | 2.40 | 100.00 |

Պահանջարկի 90.42%-ը (40,122,913,000 դրամ) ձևավորվել է Գործակալների և Դիլերների սեփական միջոցների, իսկ 8.57%-ը (3,802,355,000 դրամ)` ներդրողների հաշվին: Ներդրողների կառուցվածքը 2003թ. հունիսի 27-ի դրությամբ ունի հետևյալ տեսքը` (տես գծ. 2):

Գծապատկեր 2

*Պետական պարտատոմսերի ներդրողների կառուցվածքը 2003թ հունիսի 27-ի դրությամբ*




## ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2003 թվականի I կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում.

- կատարվել է 538 գործարք,
- գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 19,241.6մլն. դրամ (տես գծ.3), որից.
    - առևտրային բանկերի կողմից 19,241.6 մլն. դրամ (ՊԿՊ՝ 11,749.3 մլն. դրամ, ՄԺՊ՝ 7,492.3 մլն. դրամ),
    - ԿԲ-ի կողմից գործարք չի կատարվել,
- միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 13.9112%,
- միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 383 օր,
- միջին օրական ծավալը կազմել է 160.3 մլն. դրամ,
- գործարքների միջին օրական քանակը՝ 4:

Գծապատկեր 3

***2003 թվականի I կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործառնությունները ըստ ժամկետայնության***




| | 1-91 օր | 92-182օր | 183-273 օր | 274-364 օր | 365 և ավել |
|---|---|---|---|---|---|
| գործ. ծավալ | 4,168,146,0 | 3,639,006,0 | 2,529,620,0 | 2,199,595,0 | 6,705,272,0 |
| եկամտ. % | 10.52 | 12.68 | 13.89 | 13.87 | 16.70 |

- երկրորդայոյին շուկայում իրականացված գործարքների եկամտաբերությունը տատանվել է 5.99%-ից 19.98% սահմաններում:

Գծապատկեր 4

2003 թվականի I կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործարքների եկամտաբերության և ժամկետայնության փոխադարձ կապը



# *ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ*

2003թ. առաջին կիսամյակում Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնությունններն ունեցել են հետևյալ տեսքը՝ (տես աղ. 4, 5)

- 17 աճուրդից մասնակցել է 17-ին,
- ներդրման ծավալը կազմել է 450.479.000 դրամ,
- մարվել է 342.917.000 դրամի պարտատոմս,
- տեղաբաշխված ՊԿՊ-ների 4.46 % ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով,
- միջինը մեկ աճուրդի ժամանակ ներդրվել է 26.498.765 դրամ,
- հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ շրջանառության մեջ է եղել 695.954.000 դրամի պարտատոմս (տես գծ. 5),

**Գծապատկեր 5**

***Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը***




- բացված դեպո հաշիվների քանակը կազմել է 620, որոնցից 56-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում (տես գծ. 6),

**Գծապատկեր 6**

***Դեպո հաշիվների դինամիկան***




- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 186 օր,
- մեկ ներդրողի կողմից ներդրման ծավալը կազմել է 2.370.942 դրամ,
- միջինը մեկ աճուրդում մեկ ներդրողի ներդրման ծավալը կազմել է 1.516.764 դրամ:

Աղյուսակ 4

*ԳՊ-ի կողմից 2003թ-ի առաջին կիսամյակի ընթացքում իրականացրած գործառնությունները*

| | Մարում | Սպասարկում | Ընդամենը | Տեղաբաշխում | Տեղաբաշխվածի կշիռը (%) | Աճուրդ. քանակը | Մեկ աճուրդի ներդրման միջին ծավալը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 27-39 շաբ. | 48.997.951 | 5.498.049 | 54.496.000 | 69.073.000 | 15.33 | 4 | 17.268.250 |
| 40-52 շաբ. | 253.805.401 | 34.615.599 | 288.421.000 | 381.406.000 | 84.67 | 13 | 29.338.923 |
| Ընդամենը | 302.803.352 | 40.113.648 | 342.917.000 | 450.479.000 | 100.00 | 17 | 26.498.765 |

Աղյուսակ 6

*30.06.2003թ. դրությամբ ԳՊ-ի միջոցով շրջանառության մեջ գտնվող ՊԿՊ-եր*

| | 27-39 շաբաթ | 40-52 շաբաթ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Անվանական արժեք | 85,015,000 | 610,939,000 | 695,954,000 |
| Գնման գին | 77,928,624 | 536,914,754 | 614,843,378 |
| Սպասարկում | 7,086,376 | 74,024,246 | 81,110,622 |
| Միջին եկամտաբերություն | 14.09% | 14.42% | 14.38% |
| Կշիռը | 12.22% | 87.78% | 100.00% |

Գծապատկեր 7

*Ներդրումներն ըստ ժամկետայնության*



# *ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ*

2003 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1078.4 մլն ԱՄՆ դոլար և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 11.9 տոկոսով, իսկ 2002 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ` 5.2 տոկոսով (տես աղ. 5, գծ. 8):

**Գծապատկեր 8**

***ՀՀ արտաքին պետական պարտքի և նրա բաղադրիչների դինամիկան***




**Աղյուսակ 5**

***ՀՀ արտաքին պետական պարտքը 2003 թվականի հունիսի 30-ի դրությամբ***

| Ցուցանիշի անվանումը | Պարտքի մեծությունը, մլն ԱՄՆ դոլար | | | Պարտքի կառուցվածքը, % | | |
|---|---|---|---|---|---|---|
| | առ 30.06.02թ. | առ 31.12.02թ. | առ 30.06.03թ. | առ 30.06.02թ. | առ 31.12.02թ. | առ 30.06.03թ. |
| ՀՀ արտաքին պետական պարտք | 963.6 | 1025.5 | 1078.4 | 100.0 | 100.0 | 100.0 |
| այդ թվում` | | | | | | |
| 1. ՀՀ Կառավարության արտաքին պարտավորություններ | 762.3 | 811.3 | 866.3 | 79.1 | 79.1 | 80.3 |
| որից` | | | | | | |
| Բազմակողմանի վարկատուներ | 559.6 | 606.3 | 659.0 | 58.1 | 59.1 | 61.1 |
| Համաշխարհային բանկ | 490.2 | 542.1 | 593.0 | 50.9 | 52.9 | 55.0 |
| Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ | 22.3 | 26.0 | 29.6 | 2.3 | 2.5 | 2.7 |
| Վերակառուց. և Զարգաց. Եվրոպական Բանկ | 31.1 | 28.8 | 26.2 | 3.2 | 2.8 | 2.4 |
| Եվրամիություն | 16.0 | 9.4 | 10.3 | 1.7 | 0.9 | 1.0 |
| | | | | | | |
| Երկկողմանի վարկատուներ | 202.7 | 205.0 | 207.3 | 21.0 | 20.0 | 19.2 |
| Ռուսաստանի Դաշնություն | 101.2 | 93.8 | 93.8 | 10.5 | 9.1 | 8.7 |
| ԱՄՆ | 65.4 | 61.3 | 60.2 | 6.8 | 6.0 | 5.6 |
| Գերմանիա (KfW) | 20.0 | 35.2 | 42.2 | 2.1 | 3.4 | 3.9 |
| Թուրքմենստան | 11.2 | 9.4 | 5.7 | 1.2 | 0.9 | 0.5 |
| Ֆրանսիա | 3.5 | 3.7 | 4.1 | 0.4 | 0.4 | 0.4 |
| Ճապոնիա | 1.4 | 1.5 | 1.5 | 0.1 | 0.1 | 0.1 |
| | | | | | | |
| 2. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ | 174.5 | 194.8 | 203.7 | 18.1 | 19.0 | 18.9 |
| որից` | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բազմակողմանի վարկատուներ | 174.5 | 194.8 | 203.7 | 18.1 | 19.0 | 18.9 |
| Արժույթի Միջազգային Հիմնադրամ | 174.5 | 194.8 | 203.7 | 18.1 | 19.0 | 18.9 |
| | | | | | | |
| 3. ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին երաշխիքներ | 26.7 | 19.4 | 8.4 | 2.8 | 1.9 | 0.8 |
| որից` | | | | | | |
| Բազմակողմանի վարկատուներ | 21.7 | 19.4 | 8.4 | 2.3 | 1.9 | 0.8 |
| Վերակառուց. և Զարգաց. Եվրոպական Բանկ | 10.6 | 9.4 | 8.4 | 1.1 | 0.9 | 0.8 |
| ԱՊՀ Միջպետական Բանկ | 11.1 | 10.0 | - | 1.1 | 1.0 | - |
| | | | | | | |
| Երկկողմանի վարկատուներ | 5.0 | - | - | 0.5 | - | - |
| Շվեյցարիա | 5.0 | - | - | 0.5 | - | - |

2003 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պարտավորությունների 80.8 տոկոսը կազմել են բազմակողմանի վարկատուներից ստացված վարկային միջոցները, իսկ մնացած 19.2 տոկոսը` երկկողմանի վարկատուներից ստացված վարկերը:

2003 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին վարկային զամբյուղը համալրվել է ևս մեկ վարկային պայմանագրով.

- **Կառուցվածքային բարեփոխումների V-րդ վարկային ծրագիր` SAC-5** (վարկատու` *Միջազգային Զարգացման Գործակալություն*, վարկառու` *ՀՀ Կառավարություն*): Վարկային պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 30.2 մլն SDR:

Ինչպես բոլոր նախորդ վարկերը, վերոհիշյալ վարկը ևս Միջազգային Զարգացման Գործակալության կողմից տրամադրվել է արտոնյալ պայմաններով:

2003 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների գծով ստացվել է 54.8 մլն ԱՄՆ դոլար և միաժամանակ արտաքին պարտավորությունների սպասարկմանը ուղղվել է 36.9 մլն ԱՄՆ դոլար (տես աղ.6, 7), որից`

- տոկոսավճարների գծով 6.9 մլն ԱՄՆ դոլար,
- հիմնական գումարի մարման գծով 30.0 մլն ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6

***ՀՀ արտաքին պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների օգտագործումը 2003 թվականի առաջին կիսամյակի ընթացքում***

*/ մլն ԱՄՆ դոլար /*

| Ցուցանիշի անվանումը | Օգտագործում | Սպասարկում | | |
|---|---|---|---|---|
| | | ընդամենը | այդ թվում` | |
| | | | մարում | տոկոսավճար |
| Ընդամենը | 54.8 | 36.9 | 30.0 | 6.9 |
| այդ թվում` | | | | |
| ՀՀ Կառավարության արտաքին պարտավորությունների գծով | 41.3 | 14.1 | 8.0 | 6.1 |
| ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով | 13.6 | 11.1 | 10.9 | 0.2 |
| ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին երաշխիքների գծով | - | 11.7 | 11.0 | 0.6 |

Աղյուսակ 7

***ՀՀ արտաքին պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների օգտագործումն ըստ վարկատուների 2003 թվականի առաջին կիսամյակի ընթացքում***

*/ մլն ԱՄՆ դոլար /*

| Ցուցանիշի անվանումը | Օգտագործում | Սպասարկում |
|---|---|---|

| | | ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | մարում | տոկոսավճար |
| Ընդամենը | 54.846 | 36.931 | 29.970 | 6.961 |
| այդ թվում | | | | |
| Բազմակողմանի վարկատուների գծով | 51.130 | 28.782 | 25.056 | 3.726 |
| որից | | | | |
| Համաշխարհային բանկ | 34.510 | 2.445 | 0.245 | 2.201 |
| Արժույթի Միջազգային Հիմնադրամ | 13.595 | 11.106 | 10.875 | 0.231 |
| Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ | 2.790 | 0.098 | - | 0.098 |
| Վերակառուց. և Զարգաց. Եվրոպական Բանկ | 0.235 | 4.488 | 3.936 | 0.551 |
| Եվրամիություն | - | 0.146 | - | 0.146 |
| ԱՊՀ Միջպետական Բանկ | - | 10.500 | 10.000 | 0.500 |
| | | | | |
| Երկկողմանի վարկատուների գծով | 3.715 | 8.149 | 4.914 | 3.235 |
| որից | | | | |
| Ռուսաստանի Դաշնություն | - | 2.545 | - | 2.545 |
| ԱՄՆ | - | 1.654 | 1.151 | 0.503 |
| Գերմանիա (KfW) | 3.715 | 0.167 | - | 0.167 |
| Թուրքմենստան | - | 3.763 | 3.763 | - |
| Ֆրանսիա | - | 0.014 | - | 0.014 |
| Ճապոնիա | - | 0.006 | - | 0.006 |

2003 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արտաքին պետական պարտքի մեծությունը 2002 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ աճել է շուրջ 52.9 մլն ԱՄՆ դոլարով, որը պայմանավորված է եղել

- օգտագործում – մարում տարբերությամբ՝ ընդհանուր գումարի 46.9 տոկոսը (24.8 մլն ԱՄՆ դոլար),
- արժութային տատանումներով՝ ընդհանուր գումարի 53.1 տոկոսը (28.1 մլն ԱՄՆ դոլար):

Եվ վերջում նշենք, որ 2003 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների սպասարկման գծով բոլոր վճարումները կատարվել են ժամանակին և պատշաճ կերպով: